



ԵՐԶԱՆԿԱՆԻՇՆԱՍԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԱՆՎԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Մայիսի 8-ին լրացավ երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի մահվան երկրորդ տարեկիցը:

Այս տխուր առիթով Մայր Տաճարում հանդիսավոր հոգեհանգստյան սուրբ պատարագով, քարոզով և երախտագետ սրտի ամենախորունկ զգացմունքով և որդիական սրտատուշ ակնածանքով նշվեց հանգուցյալ մեծագործ Հայրապետի մահվան երկրորդ տարեկիցը:

Երջանկահիշատակ Գևորգ Զ-ի մահով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կորցրեց իր առաքելաշավիղ և աստվածարյալ Հայրապետին, հայ ժողովուրդը՝ իր հայրենասեր և արժանավոր ղավակին, իսկ Հայրենիքը՝ իր հավատարիմ բազաբացուն:

Հանգուցյալ Հայրապետը մեր ազգային-եկեղեցական պատմության անկրկնելի գեմբերից մեկն էր, որի անունն ու կյանքը, գործունեությունն ու նվիրական հիշատակը թանկ են եղել ոչ միայն հայ հավատացյալ ժողովրդի համար, այլ նաև քրիստոնեական բոլոր եկեղեցիների և խաղաղասեր ողջ ազգերի համար:

Հանգուցյալ Հայրապետի կյանքն ու բազմաբեղուն գործունեությունը, նոր-նախիջեվանի սարկավազության օրերից մինչև Ամենայն Հայոց Հայրապետությունը, սերտորեն կապված են եղել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակի հետ: Նա մեր ազգային-եկեղեցական ինքնատիպ և լուսավոր գեմբերից մեկն էր որպես մարդ, որպես հայրենասեր, որպես եկեղեցական և մանավանդ որպես Ամենայն Հայոց Հայրապետ: Նա իր սրտի ամենաշերտ գուրգուրանքով կապված էր հայ ժողովրդի, մեր պանծալի Եկեղեցու, մեր հոգևոր-մշակութային անկրկնելի արժեքների հետ:

Հանգուցյալ կաթողիկոսի գործունեությունը շափաղանց ընդարձակ հորիզոններ է ընդգրկել: Ամեն տեղ ու ամեն պարագայի մեջ նա ավելի քան վաթսուն տարիներ սրբությամբ և պատվով ծառայել է իր ժողովրդին, նրա արդար դատին, մեր պանծալի Հայրենիքին և Ս. Եկեղեցուն: Երանաշնորհ Հայրապետի թանկագին անունը, մանավանդ նրպես Ամենայն Հայոց կաթողիկոսի, ոսկե տառերով է գրված հայ հավատացյալ ժողովրդի սրտում և մեր Եկեղեցու նորագույն պատմության մեջ: Հանգուցյալ Հայրապետն իր եկեղեցասիրական, հայրենասիրական, ժողովրդանվեր գործունեությամբ, իր առաջինազարդ կենցաղով, բարոյական և իմացական հավազյուտ շնորհներով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ իր ունեցած խորունկ սիրով ու նվիրվածությամբ, իր ազգային-եկեղեցական բազաբանությամբ, հեռուես ու փորձված վարչագիտությամբ ոչ միայն լուսավոր և անմոռաց հիշատակ թողեց մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքում, այլև մանավանդ կարողացավ բարձր պահել Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության դերագահ և բարձրագույն հեղինակությունը:

Նրա հայրապետության տարիներին հայ հավատացյալի երախտագետ սիրտը ավելի կապվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, և հանգուցյալ Հայրապետը հանդիսացավ ազգային միասնության և եկեղեցական միասնականության սրտահույզ խորհրդանշանը: Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի ապրած բովանդակ կյանքը հանդիսացել է նրա ղավանած և պաշտած Ազգային Եկեղեցու միասնության, հայրենասիրության, ժողովրդասիրության վսեմ գաղափարների պայծառ քարոզը: «Սիրեցէ՛ք էջմիածինը» — ահա հան-

զուցյալ Հայրապետի նվիրական կապիը, որը սրբությամբ պետք է պահի ամեն մի հավատացյալ և հայրենասեր հայ, որովհետև «Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը, — պատգամել է մեզ մեր սիրելի Հայրապետը, — աստվածային պարզ և մեզ համար, զարեւի պատմությամբ սրբազորոված և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կյանքում: Ջլատել Ս. Էջմիածնի բարոյական ուժն ու հեղինակությունը, աստեությունը բարոզել նրա դեմ և ժողովրդին մոլորեցնել՝ երեխայական անմտություն է և ազգավնաս գործողություն»:

Հանգուցյալ Հայրապետը կամուրջ հանդիսացավ Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության միջև: Նրա հայրապետության տարիներին ամբողջովեց կապը Մայր Աթոռի և մեր մշտա նվիրապետական Աթոռների, բնների միջև, որոնք կազմում են ազգային-եկեղեցական տեսակետից մի օրգանական անբաժանելի միասնություն:

Երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի օրով Մայր Աթոռի և Հայրենի հարազատ պետության փոխհարարելությունները կանոնավորվեցին: Ամենայն Հայոց Հայրապետության դիրքը Հայրենի կառավարության հանդեպ նրա օրով եղել է օրինական, ուղիղ, ազնիվ, ինչպես պարտ էր լինել ըստ տերունական և առաքելական պատգամի:

Հանգուցյալ Հայրապետի անվան հետ են կապված Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու վերակազմակերպման, ազգային-եկեղեցական, հոգևոր ու մշակութային զարթոնքի աշխատանքների սկզբնավորությունը:

Մեզ հետ չէ ամենից սիրված ու հարգված մեծանուն Հայրապետը, բայց մեզ հետ են նրա հոգին, նրա պատգամը, նրա շունչն ու խոհերը: Չի մահացել Փետրվարի 2-ը, ինչպես չեն մահացել մեր մեծ ազգային-եկեղեցական զեմբերը, որոնք սպրտում են եկեղեցու կյանքում, հայ հավատացյալի հրախտազետ սրտում իրենց անմահ գործերով, պատգամներով, պայծառ ու խնկելի հիշա-

տակներով: «Նրանի մեռելոցն, սրբ ի Տէր ննջեցին, զի զործք իրեանց շողան զհետ նոցա» (Յայանթ., ԺԳ 13):

1955 թվականի սեպտեմբեր ամսին վերացավ այի սե բողը Հայրապետական Աթոռի վրայից և նոր Հայրապետի՝ Նորին Ս. Օծուբյուն Տ. Տ. Վազգեն Ա-ի արժանավոր ընտրությամբ մի անգամ ևս փառավորվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և «տրախտեթեամբ ուրախ եղև», որովհետև նորրեօրը Հայրապետը, մեր դասական հոգևորականների տեսլականով և կերպարով, իր առաքինազարդ ու անբասիր կենցաղով, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նկատմամբ իր ունեցած անսահման սիրով ու նվիրվածությամբ, մեր զարավոր ազգային-եկեղեցական ավանդությունների նախանձախնդրությամբ պիտի շարունակի և ապրեցնի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կյանքում մեր կռամեծ հայրապետների սրբազան ավանդները, որոնք մեզ ժառանգ են մնացել մեր սրբազան նախնիքներից, Ս. Լուսավորչից սկսած մինչև Փետրվարի 2, ավանդներ, որոնցով ապրել, ստեղծագործել ու այսօրվա պայծառ ու խոստումնալից օրվան են հասել Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և հայ ժողովուրդը:

Խո՛ւնկ ու աղո՛թք բո անթառամ ու խնկելի հիշատակին, մեր սուրբ և անմոռանալի, հրախտաշա՛տ Հայրապետ:



Մայիսի 27-ին, կիրակի, հավարտ սուրբ պատարագի, Մայր Աթոռի միաբանությունը, գլխավորությամբ Նորին Ս. Օծուբյուն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի, պատշաճ հանդիսությամբ հոգևհանգիստ կատարեց երջանկահիշատակ Փետրվարի 2 կաթողիկոսի մահվան երկրորդ տարելիցի առիթով: Հանգուցյալ Հայրապետի գերեզմանի վրա բարոզեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, վեր հանելով այն կարևոր աշխատանքը, որ կատարել է երջանկահիշատակ Հայրապետը Ս. Էջմիածնի և Հայաստանյայց եկեղեցու համար:

